



ԶԳՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ*

«...Լուսանել յօրինմամբ հրաշակերտեցեր զՄայր Աթոռն մեր զսուրբ Էջմիածին և արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհացոյ աստուածայնոց՝ ի լինել դաստիարակ և կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց»:

Ժ ա մ մ ու տ

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Շ ա ր ա կ ա ճ

Ժամագիրքն ու Ծարականը այսպես կը բնորոշեն հորինվածքը, կոչումն ու դերը Մայր Աթոռ կաթողիկէ սուրբ Էջմիածինի:

Ըստ Ազաթանգեղոսի¹ ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ (302) Աստուծո Միածին Որդին՝ լուսակերպ մարդու նմանությամբ՝ երկինքէն հոսող լույսերու մեջ՝ հրաթել լուսեղեն ոգիներն շրջապատված՝ Հորը մոտեն արծվի արագությամբ, ահագին դըղըրդումով, կիջնէ Հայոց մայրաքաղաքը Վաղարշապատ՝ Տրդատի արքունիքին մոտը և կկանչէ. «Գրիգոր, Գրիգոր, վեր նայե և տես սքանչելիքը զոր կցուցնեմ քեզի»²:

Եվ ահա սուրբը պակուցումով կտեսնէ բարձրահասակ, լուսատեսիլ մարդն ահեղ, որ ձեռքին բռնած ոսկի ուռնովը կբախէ գետինը, ուր կտեսնվի ոսկի խարխալ մը խարսխաձև, ճախարակաձև, բլուրի մը մեծությամբ, վրան հրեղեն սյուն մը խաչապսակ՝ և սյունանման ուրիշ երեք խարխալներ՝ Գայանէի, Հոփսիսիմէի նահատակության տեղերուն և հնձանի վրա: Անոնք իրարու կկապվին լուսեղեն կամարներով և կկազմեն համալիր (complex) մը՝ ս. Էջմիածինը:

Աշխարհի Լույսը կիջնէ Հայաստան:

* Կաթողիկէ ս. Էջմիածնի տոնի առթիվ հաճույքով հրատարակում ենք տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանի ձոնը՝ նվիրված ս. Էջմիածնին:

¹ Ազաթանգեղոս, հտծ. ԾԲ:

Լուսավորչի միտքին մեջ կկազմվի սուսքին ուրվագիծը Էջմիածնի և կաթողիկէ Մայր տաճարին:

*
* *

Էջմիածինը իբրև տեսլական պատկերացումը Աստուծո Միածինն Հայաստան Էջքին՝ տեսիլքն է մեր հավատքին հորը ս. Գրիգորի, ուրեմն նաև տեսլականը հայության:

Սկիզբէն տեսիլքի երևույթով պատկերացված Էջմիածինը՝ հետո Աստուծո հանգին պես՝ մարմին կառնէ: Անոր հորինվածքին լուսեղեն գիծերը հետզհետե կլեցվին ոսկորով, ջիղով, մկանով և հոգիով:

Եվ Էջմիածինը կլինի կաթողիկէ...

«.....տեղ, եւ տաճար Աստուծոյ, եւ տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, եւ աթոռ քահանայութեան..... Իսկ կամարքն որ ի սեանց անտի ի միմեանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան կաթողիկէ եկեղեցոյ: Իսկ խորանն ի վերայ, ունի զօրինակ վերնոյ քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեան երկնից»²:

Այսպես ահա Էջմիածնի իմանալի խորհուրդը և զգալի լինելությունը կմիավորվին, կիմաստավորվին և կդառնան պատմություն

² Ազաթանգեղոս, հտծ. ԾԲ:

Հայաստանյայց աստվածական եկեղեցւոյ պատմութիւնն հայոց:

Էջմիածինը Հորը Միածնին, Արդար Արեգակին ծագումն է Հայաստանի և հայ հոգիներուն վրա, հայոց գոյության և կենսունակության աղբյուրը հորդահոս, քանի որ հիշված տեսիլքին մէջ «Աղբիւր բխեցաւ յորդարութիւն, եւ հոսեցաւ ծառայեցաւ առ հասարակ ամբողջ դաշտը՝ աչք կտրելու չափ: Եւ դաշտը լեցուն եւ կապուտագոյն ծով, եւ դաշտերն առ հասարակ երեցան երկնագոյն»³:

Ասոր համար ալ հայ ժողովուրդին համար Էջմիածինը լուսաղբյուր է և լուսամայր, նշանաւորութեամբ ս. Աստվածածինին, որ անունն իսկ է կաթողիկէ Մայր տաճարին:

Բնականաբար Էջմիածինի հետ կապված են ողջ աշխարհի հայոց սիրտերը: Անոր վրա կսեւեռին հայոց աչքերը Իսփահանի Նոր Զուղայեան մինչև աշխարհի չորս ծագերը:

**«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի»:**

Այս է համոզումը հայուն, որուն հավատքին խարխսն է Փրկիչը Հիսուս Քրիստոս: «Ով որ կհավատա Որդւոյն՝ կընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 36):

Եվ տուն մը՝ հայոց տունը՝ Էջմիածին, որ հաստատված է ճշմարիտ հավատքի վեմին վրա, չի սասանիր, չի կործանիր ամենևին: Ան կապի հավիտյան, թե իսկ արհաւիրքի, արշաւի, սուրի և հուրի հեղեղները թափին անոր վրա և հարվածեն զայն:

Էջմիածինը դարերով կործք տվալ ահաւոր աղետներու, որ փոթորիկի պէս խուժեցին Հայոց աշխարհին վրա: Էջմիածինը բազում անգամ վերածնալ արյունի և կրակի մկրտութեամբ: Ան իր մոտ երկու հազար տարիներու կյանքին մէջ քանի՜-քանի՜ անգամ մինչև մրուրը քամեց չարչարանքի բաժակը, կրակի բովեց անցալ՝ բայց ողորմութեամբ Աստուծո ձուլ ոսկի դուրս եկալ. սուրբ Հոգիին մկրտութեան հետ հուրի և արյունի մկրտութեամբ ալ սրբացալ, արդարացալ, արմալենիի պէս ծաղկեցալ, կաղնիի պէս արմատացալ, ճյուղավորուցալ:

* *

Էջմիածինը կաճի ու կծաղկի հավետ, քանի հաստատված է և հավատարիմ կմնա մեր լոյս հավատքի վեմին, քանի կքալե

³ Նոյնը:

Ավետարանի ճամբեն, քանի աչքի լոյսի պէս կպանե, կպահպանե հայոց լուսավորիչներու ավանդները ազգային կրոնական, որոնք ծնունդ և սնունդ կանեն փրկության Ավետարանին, հայրենի հողին, հայ հանձարի ցոլքին, հայոց եկեղեցւոյ և հայ ժողովուրդի պատմութենին:

Էջմիածինը տեսիլք լուսեղեն, Էջմիածինը տաճար Աստուծո և տուն աղոթքի, Էջմիածինը աթոռ քահանայության, Էջմիածինը «սինն հրեղէն՝ կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովս ի միաբանութիւն հաստոց, ի ներքոյ թեոցն իւրոց»⁴:

Ահա Էջմիածինը: Ան կանգուն կմնա և անասան մեր լոյս հավատքի վեմին վրա, որ փրկիչն է աշխարհի, նույն ինքն Հիսուս Քրիստոս՝ Աստուծո Միածինը իջած Մայր Հայաստանի սիրտին մէջ, հայ հոգիին խորը... Ասոր համար է, որ դրունք դժոխաց անգամ չեն կրնար հաղթահարել զայն:

— «Ի՞նչն անճրեք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բաղխեցին գտումն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր» (Մտթ. Է 23):

* *

Աղոթենք և ջանանք, որպէսզի Էջմիածինը միշտ լինի և՛ մարմին, և՛ տեսիլք, ինչպէս որ է իր սկիզբն ու հորինվածքը:

Հիմալ ալ ատենն է, որ ամբողջ ազգով միասին համախմբվինք Էջմիածնի շուրջը, սիրենք և գործենք, շինենք և շենցենք մեր ս. Էջմիածինը մեսիական, որպէսզի նա այսուհետև ալ, որպէս տուն աղոթքի և տաճար Աստուծո, որպէս կաթողիկէ Մայր Աթոռ Հայաստանյայց՝ շարունակե բաշխել ս. Հոգիին անսպառ շնորհները՝ լինելով իսկական ծնող, դաստիարակ և կատարելագործիչ բոլոր Հայաստանյայց եկեղեցիներուն, զորս իրավամբ և գործնապէս կանձնավորեն իր կաթողիկէովն ու կաթողիկոսովն Ամենայն Հայոց:

«Էջ Միածինն ի Հօրե...

Եւ լոյս փառաց ընդ նրմա...

Եկալք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ,

**Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի»:**

⁴ Ագաթանգեղոս, անդ:

⁵ Ծարական: